ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«ՎԱՐԴԵՆԻՍԻ ԲԺՇԿԱ-ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ» ՍՊԸ-Ի ԵՎ «ՊՐՈՎԻԶՈՐ-ՆԿԱՐԻՉ ԼԵՎՈՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՍՊԸ_Ի ՄԻՋԵՎ

Ք.Երևան

15.11.2023թ.

«Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ» ՍՊԸ-ի դեմս տնօրեն Ն. Գասպարյանի մի կողմից և «Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի՝ անվան բժշկական քոլեջ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Ի.Սարգսյանի մյուս կողմից /այսուհետ՝ Կողմեր/, հաշվի առնելով ակադեմիական և հետազոտական ոլորտում համագործակցության հանդեպ փոխադարձ հետաքրքրությունները, ինչպես նաև ցանկանալով պաշտոնապես ճանաչել երկու քոլեջների միջև համագործակցությունը, կազմեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Հիմնվելով կողմերի միջև առկա ուսումնական, մշակութային, գիտական կապերի վրա, կարևորելով կողմերի փոխադարձ հետաքրքրության ոլորտում համագործակցության իրականացումը և փորձի փոխանակումը, ցանկանալով խրախուսել կողմերի միջև գիտելիքների և փորձի փոխանակումը, համոզված լինելով կողմերի զարգացման հարցում փոխադարձ օգնություն ցուցաբերելու համար համագործակցության արդյունավետության մեջ, կողմերը նախատեսում են համագործակցություն՝ կրթական, հետազոտական, ուսումնամանկավարժական գործունեության ոլորտներում, ծրագրերի համեմատության (benchmarking), համատեղ սեմինարներ, կոնֆերանսների կազմակերպման բնագավառում:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

Որպես համագործակցության և փոխանակության ձևեր կողմերն ընդունում են՝

- Կողմերի կողմից տրվող վկայագրերի փոխադարձ ճանաչում.
- հանդիպումների կազմակերում.
- մասնակցություն պայմանավորվող կողմերի կողմից կազմակերպվող ուսումնամադաստիարակչական միջոցառումներին.
- ազգային և միջազգային ծրագրերի և մասնավոր հիմնադրամների կողմից ֆինանսական աջակցություն ստանալու համար համատեղ նախագծերի մշակում.
- արդյունավետ աշխատանքի և համատեղ գործունեության ապահովման նպաստում.
- ըստ հնարավորությունների կրթական, մշակութային, մարզական միջոցառումների կազմակերպում.
- գրադարանների միջև գրականության փոխանակում:
- ապահովվել փորձի փոխանակումը (բաց դասեր, դասալսումներ, մեթոդներ և այլն) և քոլեջների զարգացումը, նպաստելով նաև հաստատության միջազգայնացմանը:
- Կազմակերպել դասավանդողների կատարելագործմանն ուղղված միջոցառումներ ըստ՝ մեթոդական, մասնագիտական և բարեփոխումների ուղղվածությունների:
- Քոլեջների փորձի փոխանակման, համագործակցության նպատակով՝ ապահովել կապը Կարիերիայի ուղղորդման և որակի ներքին ապահովման գործառույթներում:

Անհրաժեշտության դեպքերում վերոնշված գործողությունների պայմաններն ու ձևերը կսահմանվեն յուրաքանչյուր առանձին դեպքի համար նախատեսված համաձայնագրերով:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Յուրաքանչյուր Կողմ ինքն է կարգավորում վճարման հարցերը: Սույն պայմանագրի կատարման համար միջոցներ կապահովեն քոլեջները (հնարավորությունների սահմաններում), համագործակցության մասնակիցները, ազգային /միջազգային/ ծրագրերն ու մասնավոր հիմնադրամները:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են.

- բարեխղճորեն և սահմանված ժամկետներում կատարել ստանձնած պարտականությունները,
- կանոնավոր կերպով տեղեկացնել միմյանց բնագավառի վերաբերյալ օրենսդրական փոփոխությունների մասին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Արտագնա միջոցառումների կազմակերպման ժամանակ դասախոսների և ուսանողների ճանապարհածախսը, բժշկական ապահովագրությունը, օրական և այլ ծախսերը կսահմանվեն առանձին երկկողմանի համաձայնագրերով/որոնք կարող են կազմել սույն Պայմանագրի մաս կամ սահմանվել այլ փաստաթղթով/: Յուրաքանչյուր գործողության համար ֆինանսական աջակցությունը կքննարկվի ստորագրողների կողմից և ամփոփագրի տեսքով կհանդիսանա որպես հավելված:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Պայմանագրով և առանձին համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կերպով կատարելու դեպքում Կողմերը կրում են գույքային պատասխանատվություն պայմանագրով և օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ, ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Պայմանագիրը կազմված է հայերենով, ուժի մեջ է մտնում կնքելու օրվանից: Սույն համագործակցության պայմանագիրը կնքվում է սկզբնական 5 տարի ժամկետով: Այն կարող է երկարացվել ստորագրողների կողմից:

Սույն պայմանագիրը կարող է ամբողջությամբ կամ մասնակիորեն լրացվել, փոփոխվել, բացառությամբ՝ պայմանագրի առարկայի, փոխադարձ համաձայնությամբ ստորագրողների Կողմից լրացուցիչ համաձայնագիր կազմելու միջոցով:

Սույն պայմանագիրը կարող է լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին ենթադրվող դադարեցումից ոչ ուշ քան մեկ ամիս առաջ գրավոր ծանուցմամբ՝ չխախտելով արդեն ծրագրավորված ընթացիկ, բայց դեռևս չկատարված գործողությունները:

Փոփոխություններն ու լրացումներն արվում են Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ:

Պայմանագրի փոփոխություններն ու լրացումները կազմվում են լրացուցիչ համաձայնագրերով և դառնում են սույն Պայմանագրի անբաժան մաս: Սույն պայմանագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում: Սույն

Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն առաջնորդվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Պայմանագրի մեկական օրինակ:

8. ԿՈՂՄԵՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ

Պրովիզոր-նկարիչ Լևոն Սարգսյանի անվան բժշկական քոլեջ ՍՊԸ	Վարդենիսի բժշկա-հումանիտար քոլեջ ՍՊԸ
ՀՎՀՀ 01528327	ՀՎՀՀ՝ 08212216
ՀԷԲ Մյասնիկյան Մ/Ճ	ԱԿԲԱ բանկ ՓԲԸ
Հ/Հ 163038101396	Հ/Հ 220383330564000
Ք. Երևան Իսահակյան 30	Հասցե՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Համբարձումյան 19
Հեռ.՝ (010)58-03-07; 094-75-56-72	Հեռ.՝ +374 77 26 12 01
Էլ.հասցե՝ levonsargsyancollege@mail.ru	Էլ.հասցե՝ vardenisi-bhq@rambler.ru
Տնօրեն՝ Ի.Սարգսյան -Հակոբյան	Տնօրեն՝ Ն.Գասպարյան
Կ.Տ. ստորագրություն	Կ.Տ. ստորագրություն